

ԲԱՌԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵՂՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ի՞նչ է բառը, ի՞նչ տեղ է գրավում նա լեզվական միավորների շարքում և ի՞նչ դեր ունի լեզվի մեջ, ի՞նչ շարժում է նա ինքնություն, ի՞նչ հարաբերություն ունի լեզվական մյուս միավորների հետ: Այս հարցերը ժամանակակից լեզվաբանությանը հուզող հարցերից են և սրանց պատասխանը, անշուշտ, ունի ինչպես ընդհանուր տեսական, այնպես էլ գործնական նշանակություն՝ բառարանագրական պրակտիկայում:

Հենց այդ կարևորությունն է պատճառը, որ նշված հարցերը լայնորեն քննվում են ժամանակակից լեզվաբանության բոլոր ուղղությունների կողմից՝ թե՛ արտասահմանում և թե՛ Սովետական Միությունում: Չնայած անցյալի ու ներկայի լեզվաբանները մեծ աշխատանք են կատարել այս հարցերի լուծման ուղղությամբ, այնուամենայնիվ դրանք դեռևս մնում են վերջնականապես չլուծված և կարոտ են բազմակողմանի հետազոտության: Հասկանալի է, որ հոլովածի սահմաններում դժվար է, ավելի ճիշտ, անկարելի է քննել այս բոլոր հարցերի մասին եղած կարծիքները և ի մի բերել դրանք: Ուստի մենք ստիպված ենք համառոտակի անդրադառնալ այդ հարցերին և միաժամանակ փորձ անել արտահայտելու մեր վերաբերմունքը քննարկվող հարցերի վերաբերյալ:

Խոսելով բառի մասին, մենք պետք է նշենք այն հանգամանքը, որ մինչև այժմ չկա բառի, որպես լեզվական միավորի, ընդհանուր և միասնական բնորոշում: Իսկ ժամանակակից լեզվաբանության շատ ներկայացուցիչներ (մասնավորապես ստրուկտուրալիստները) ընդհանրապես անտեսում են բառը որպես լեզվական միավոր, հիմք ընդունելով միայն ձևույթը: Նրանք բառը դուրս են թողնում իրենց ուշադրության կենտրոնից այն պատճառով, որ այն, իրենց կարծիքով, չունի ինքնությունություն: Բառի ինքնությունության բացասումը, բնական է բառի հարաբերականության տեսության հիմքում: Ըստ որում, բառի ինքնությունությունը բացասվում է տարբեր դիրքերից, թե՛ անցյալում և թե՛ այժմ:

XIX դ. 60-ական թվականներին հոգեբանական ուղղության ներկայացուցիչ Շտայնտալը գտնում էր, որ բառը հոգեբանական ակտ է և մարդը, արտասանելով բառը, դնում է բառիմաստի մեջ իր ապրումները, զգացմունքները: Եվ, քանի որ այդ զգացմունքները տարբեր են, ըստ նրա, բառը ամեն մի կիրառության դեպքում փոխվում է, նոր բառ է դառնում: Այս առումով էլ բառի ինքնությունությունը նա համարում է ֆիկցիա¹:

Պոսսլերը բառի ինքնությունությունը բացասում էր էսթետիզմի դիրքերից²:

¹ См. H. Steintal, Über den Wandel der laute und des Begriffs. „Zeitschrift für Völkerpsychologie“, B. I, 1860. K. Erdmann. Die Bedeutung des Wortes. 4 Aufl., Leipzig, 1925, стр. 11.

² K. Vossler, Sprache als Schöpfung und Entwicklung. Eine theoretische Untersuchung mit praktischen Beispielen, Heidelberg. 1905, стр. 50.

Բացարձակացնելով լեզվի և մասնավորապես բառի արտահայտչական ֆունկցիան, նա գտնում էր, որ բառը անկրկնելի ստեղծագործական ակտ է և հենց այդ պատճառով էլ այն ինքնուրույն չէ։ Ֆոսսուրի այս տեսակետը փաստորեն նսեմացնում է բառի ընդհանրացնող դերը լեզվի մեջ։ Ստրուկտուրալիզմի ճյուղերից մեկը՝ գլոսսեմատիկան, լեզուն դիտում է որպես սոսկ անառարկայալից հարաբերությունների սխեմա, որպես իմանենտային կառուցվածք։ Այսպիսի մոտեցումը անտեսում է լեզվի և նրա հիմնական միավոր՝ բառի սպեցիֆիկան։ Իհարկե, բառի բաղադրամասի ուսումնասիրությունը ենթադրում է բառի տարբեր հարաբերությունների ուսումնասիրումը լեզվի համակարգում։ Բայց հարաբերությունների գործոնի բացառականացումը, վերջին հաշվով, նույնացնում է այդ հարաբերությունները բառիմաստների հետ։ Այսպիսի մոտեցում լեզվի բառակազմի ուսումնասիրության նկատմամբ մենք տեսնում ենք Տրիբի «իմաստային դաշտի» տեսությունում, ըստ որի բառի իմաստը բնորոշվում է միայն նրա կապերով, հարաբերություններով՝ ուրիշ բառերի հետ։ Այսպիսով, բառի իմաստը չի ընդունվում որպես բառի էական հիմնական տարր։

Մենք կարծում ենք, որ բառի զննահատման հարցում պետք է նկատի ունենալ հետևյալը։ Բառի տարբեր հարաբերությունները, տարբեր կոնտեքստները, անշուշտ, նրա իմաստի վրա կարող են թողնել համապատասխան ազդեցություն։ Սակայն այդ ազդեցության դերը և հնարավորությունները չպետք է գերազանցատել։ Որպես կանոն, կոնտեքստը բառին չի կարող տալ այնպիսի իմաստ, որի պոտենցիալ հնարավորությունը չկա տվյալ բառական միավորի մեջ։ Վերցնենք կարմիր բառը տարբեր կոնտեքստներում, տարբեր հարաբերություններում։

Կարմիր վարդը բացվեց։ Նրա կարմիր օրը սեպտեմբեր։ Կարմիր բանակը հաղթեց։

Կարմիր բառը այս տարբեր նախադասություններում արտահայտում է տարբեր իմաստներ, որոնք պայմանավորված են կիրառական միջավայրով։ Սակայն այդ հանգամանքը կարմիր բառը չի զրկում բառական ինքնուրույնությունից հետևյալ պատճառներով։ Նախ, անկախ իր իմաստային տարբերություններից, այստեղ բոլոր դեպքերում էլ ձևական տեսակետից ունենք միևնույն միավոր՝ մեկ բառ՝ կարմիր, ինչ վերաբերում է իմաստային կողմին, ապա աշխույժ ևս չի կարելի ժխտել բառի այդ երեք կիրառությունների մեջ եղած ընդհանրությունը, որով նշված նախադասություններում կարմիր բառը ոչ միայն ձևային, այլև իմաստային տեսակետից մենք ըմբռնում ենք որպես միևնույն բառի տարբեր կիրառություններ։ Նշենք այդ իմաստային կապը և ընդհանրությունը։ Կարմիր օր կապակցության մեջ մեզ հետաքրքրող բառը այլ իմաստ արտահայտելով հանդերձ, սերտորեն կապված է այդ բառի հիմնական, առարկայական իմաստի հետ և բխում է նրանից։ Նվե առաջին օրինակում (կարմիր վարդ) կարմիր բառը միայն գույնի իմաստ է արտահայտում, ապա երկրորդում նկատի է առնված կարմիր գույնի հաճելիությունը, պայծառությունը իրեն դրական հասկանիչ և փոխաբերաբար վերագրված է այլ բառի, որը նշանակում է տվյալ դեպքում կյանք։ Կարմիր բանակ բառակապակցության մեջ կարմիր բառի իմաստը միջնորդավորված ձևով դալիս է դարձյալ կարմիր գույնի իմաստից, բայց արդեն ոչ թե որպես տվյալ գույն ընդհանրապես, այլ կապված մասնավորապես արյան հետ՝ իբրև կյանքի պայքարի՝ հեղափոխության սիմվոլ։

Ինչպես երևում է բերված օրինակներից, բառի տարբեր իմաստները չեն բացառում նրա, որպես լեզվական միավորի, ինքնուրույնությունը: Նշենք, որ այդ ինքնուրույնությունը, ինչպես երևաց, բացարձակ չէ: Այսպիսով, բառը պետք է բնորոշել որպես ինքնուրույն հիմնական միավոր և բացահայտել նրա յուրահատկությունները: Ինչ խոսք, որ լեզուների տարբերությունը և տարբեր լեզուներում բառի տարբեր յուրահատկություններն ու դրսևորումները բացասաբար են ազդում նրա բնորոշման վրա և դժվարություն են ստեղծում բառի ընդհանուր լեզվական այնպիսի ձանաչման հարցում, որը վերաբերում է բոլոր լեզուներին:

Ակադեմիկոս Լ. Վ. Շչերբան այդ մասին գրել է. «Իսկապես, ի՞նչ է բառը: Ընկարծում եմ, որ տարբեր լեզուներում դրա պատասխանը տարբեր կերպ պետք է տալ: Դրանից փաստորեն բխում է, որ ընդհանրապես, բառ հասկացություն գոյություն չունի»³: Սակայն բանն այն է, որ շատ դժվար է բառը բնորոշել նույնիսկ տվյալ մեկ լեզուն նկատի ունենալով, ասենք, հայերենում, ռուսերենում, գերմաներենում առանձին-առանձին վերցրած, ըստ որում մենք չենք կարծում, թե գոնե նշված լեզուներում բառի բնորոշումները կարող են էապես տարբեր լինել:

Բառի բնորոշումը, ձանաչումը դժվարացնող էական պատճառը հենց ինքն բառի բնույթն է լեզվի մեջ, նրա սերտ կապերը և որոշ ընդհանրությունները լեզվական այլ միավորների, մասնավորապես, մի կողմից՝ ձևույթի, մյուս կողմից՝ բառակապակցության հետ:

Այնուհետև, բառի տարբեր բնորոշումների, ըմբռնումների հարցում էական դեր է կատարում հատկապես այն հանգամանքը, թե ուսումնասիրողը ինչ տեսանկյունով է մոտենում և քննում ընդհանրապես լեզուն և, մասնավորապես, բառը: Այն լեզվաբանները, որոնք լեզուն ուսումնասիրում են որպես սոսկ նըշանների սիստեմ, քննում են լեզվի միայն արտաքին կողմը, նրանց համար բառը, որպես իմաստ արտահայտող միավոր, դառնում է երկրորդական, իսկ այն լեզվաբանները, որոնք լեզուն քննում են միայն հաղորդակցական դերի տեսակետից, իսկ այս հարցում բնականաբար իմաստը մղում են առաջին պլանի վրա, բառը դիտում են որպես լեզվի հիմնական միավորներից մեկը, ոմանք և որպես միակ հիմնական լեզվական միավոր (Սմիռնիցկի, Ախմանովա, Շանսկի): Այս երկու մոտեցումների մեջ, մեր կարծիքով, կան ծայրահեղություններ, որոնք պետք է հաղթահարել: Լեզվաբանությունը պետք է ուսումնասիրի լեզվի և՛ արտաքին կողմը, կառուցվածքը, և՛ իմաստային կողմը՝ լեզուն որպես հաղորդակցական միջոց և սրա հետ կապված հարցերը: Այս տեսակետից մոտենալով հարցին՝ մենք գտնում ենք, որ բառը չպետք է դուրս թողնել լեզվական միավորների շարքից, հաշվի առնելով նրա խոշոր դերը լեզվի մեջ:

Կարծում ենք, որ նաև չի կարելի բառը համարել միակ հիմնական լեզվական միավոր և դրանով նվազեցնել մյուսների դերը, քանի որ, մանավանդ լեզվի կառուցվածքի ուսումնասիրության տեսակետից, հնչույթը, ձևույթը շատ կարևոր են: Նշենք, որ բառի և նրա իմաստի դերը լեզվի մեջ այնքան մեծ է, որ ստրուկտուրալիստները, հակառակ իրենց տեսական սկզբունքների, երբեմն հաշվի են նստում նրա հետ և հարկադրված անդրադառնում նրան:

³ Л. В. Щерба, Избранные работы по языкознанию и фонетике, 1, [Л], 1958, стр. 9.

Դեակրիպտիվ լեզվաբանությունը, ուսումնասիրության առարկա դարձնելով խոսքը, որպես հիմք ընդունում է ոչ թե բառը, այլ ձևույթը: Խոսքի ուսումնասիրման այս մեթոդը իրեն արդարացնում էր այն դեպքում, երբ նրանք ուսումնասիրում էին հնդիկների լեզուն, չունեին ոչ մի գրավոր աղբյուր և ուսումնասիրման միակ առարկան էր հանդիսանում հենց իրենց՝ հնդիկների խոսքը: Որպես հնչյունների շղթա, շարք, որոնց իմաստը անհասկանալի էր ուսումնասիրողների համար: Բայց այս մեթոդը կիրառելով ընդհանրապես լեզվի համակարգի նկատմամբ, և ելնելով իրենց ուսումնասիրության մեջ միայն ձևույթից, դեակրիպտիվիստները լեզվի նկարագրման հարցում հանդիպեցին մի շարք դժվարությունների, որոնց հաղթահարման համար պետք էր ընդունել բառը որպես ռեալ ֆունկցիավորող միավոր: Հենց այս պատճառով էլ դեակրիպտիվ լեզվաբանության ներկայացուցիչները փորձում են վերականգնել «բառ» հասկացությունը և աշխատում են բնորոշել բառը միայն ձևային տեսակետից, անտեսելով իմաստը, ու որոնում են բառի վերլուծման ձևային միջոցներ, ուսումնասիրում են բառի ձևային, հնչյունական կողմը: Եվ այն հանգամանքը, որ այդ լեզվաբանները ստիպված են լինում շեղվել սեփական սկզբունքից, խոսում են բառի այն խոշոր դերի մասին, որ նա ունի լեզվի մեջ և որը չի կարող անտեսել լեզվաբանը:

Սովետական լեզվաբանների մեծամասնությունը բառը ընդունում է որպես ռեալ և հիմնական լեզվական միավոր ու նշում է նրա բարդ բնույթը լեզվի համակարգում: Ինչպես օրինակ Ա. Ուֆիմցևան նշում է.

1. բառը կապված է «առարկայական» շարքի հետ (այսինքն, ռեալ իրականության հետ).

2. իմաստային տեսակետից կապված է այլ բառերի հետ (հոմանիշության, հականիշության, համանունության հարաբերություններ արտահայտելու դեպքում).

3. բառը իմաստային տեսակետից կարող է ունենալ իմաստային տարբերակներ, որոնք բնորոշում են բազմիմաստ բառի իմաստային պատկերը.

4. բառերն ունեն բառական և բառա-քերականական կապեր և հարաբերություններ, որոնք բնորոշում են բառիմաստների կապերի կանոնները և նրանց սինտագմատիկ կապակցվածության օրենքները:

Նա նշում է նաև բառերի բառա-քերականական պարադիգմատիկ կապերը, որոնք հնարավորություն են տալիս ստեղծելու նոր բառական միավորներ, այլև ոճական, դրացական, բարբառային, պրոֆեսիոնալ և այլ բառերի բառական ֆունկցիոնալ կապերը շեղոք բառերի հետ⁴:

Բառի այս բարդ բնույթը անհրաժեշտություն է ստեղծում ուսումնասիրելու բառը իր տարբեր ու բարդ հարաբերություններով լեզվի համակարգում, նշել նրա տեղը և դերը լեզվում:

Բերենք այլ լեզվաբանների կարծիքները բառի, որպես լեզվական միավորի, բնորոշման և հիմնական հատկանիշների մասին: Պրոֆ. Լեկովսկայան այսպես է բնորոշում բառը (նկատի ունենալով թեքական լեզուները). «Բառը լեզվական այն նվազագույն միավորն է, որն իր իմաստով արտացոլում է (համապատասխան հասկացության արտացոլման միջոցով) ռեալ իրականության այս կամ այն կողմը, հանդիսանում է հնչման ու իմաստի հանրորեն գիտակցը-

⁴ См. А. А. Уфимцева, К вопросу об изучении слова. Сборник «Проблемы современной филологии», АН СССР, изд. «Просвещение», стр. 270.

ված մի միասնություն և ունի ինքնուրույն քերականական ձևավորում: Դրան համապատասխան այն սովորաբար օգտագործվում է նախադասությունների և բառակապակցությունների կազմում, բայց կարող է, որոշ սահմանափակումներով, հանգես գալ նաև (միաբառ) նախադասության ֆունկցիայով⁵:

Հեկոլսկայայի այս ծավալուն սահմանումը, մեր կարծիքով, ձշգրիտ չի բնորոշում բառն այնպես, որ այն իբրև միավոր տարբերվի լեզվական այլ միավորներից, որոշակիորեն հակադրվի նրանց:

Հեկոլսկայայի մոտ բառի իմաստը, ըստ էության, հանգեցվում է հասկացության, մինչդեռ ոչ բոլոր բառերն են հասկացություն արտահայտում: Այսպես, ձայնարկությունները, մասնիկները (ոուսերենում), եղանակավորող բառերը և որոշ այլ բառեր, մեր կարծիքով (և ոչ միայն մեր կարծիքով) հասկացություն չեն արտահայտում: Նշենք, որ բառի, ավելի ճիշտ, բառիմաստի և հասկացության փոխհարաբերությունը, նույնպես լեզվաբանության չլուծված հարցերից է, որի վերաբերյալ կան տարբեր տեսակետներ: Մենք հնարավորություն չունենք հանգամանորեն քննելու այդ հարցը, բայց և այնպես նշենք. քանի որ ոչ բոլոր բառերն են հասկացություն արտահայտում, այդ պատճառով էլ բառի իմաստային հատկանիշը չի կարելի հանգեցնել հասկացության: Նշված հանգամանքին ավելանում է նաև այն, որ հասկացությունը տրամաբանական կատեգորիա է և ոչ թե լեզվական: Սենք կարծում ենք նաև, որ միայնակ կերպով նախադասության դեր կատարելը այնքան սահմանափակ ֆունկցիա է բառի համար (ինչպես նշում է նաև հենց ինքը՝ Հեկոլսկայան), որ հարկ չկա այդ հանգամանքը նշել բառի սահմանման մեջ:

Նման դեպքերում բառի, այսպես ասած, նախադասության վերածվելը, կամ, ավելի ճիշտ, նախադասության ֆունկցիայով հանդես գալը պետք է բացահայտել ավելի շուտ կոնտեքստով (օրինակ, անդեմ միակազմ նախադասության դեպքում: Հմմտ. աշուն, լուսն): Կամ բառի ձևը բերած քերականական կատեգորիաներով (օրինակ, մթնեց), քան թե բառի բուն բառական հատկանիշով: Ուստի և այդ քննվող երևույթը չպետք է համարել բառի հատկանիշ և մտցնել նրա սահմանման մեջ:

Որոշ լեզվաբաններ, հաշվի առնելով բառի յուրահատուկ դիրքը լեզվական այլ միավորների մեջ և դժվարանալով բառը բնորոշել այնպիսի հատկանիշով կամ հատկանիշներով, որոնցով այն տարբերվի բոլոր մյուս միավորներից, վերջինների նկատմամբ ունեցած նրա տարբեր յուրահատկությունները նշում են առանձին-առանձին: Այսպես է վարվում, օրինակ, Շանսկին⁶, բառը առանձին-առանձին հակադրելով հնչույթին, բառակապակցությանը, ձևույթին և այլ միավորներին: Այսպես, նա որոշում է բառի համար նվազագույն դիֆերենցիալ հատկանիշներ: Դրանք են՝

1. հնչյունային ձևավորումը,
2. իմաստային արժեքը,
3. բառի մեկ հիմնական շեշտ ունենալը,
4. բառա-քերականական վերադասությունը,
5. անթափանցելիությունը (непроницаемость):

⁵ К. А. Тевковская, Теория слова, принципы ее построения и аспекты изучения лексического материала, Москва, 1962, стр. 66.

⁶ Н. М. Шанский, Лексикология современного русского языка, издательство «Просвещение», Москва, 1964, стр. 10.

Հնչույթից բառը տարբերվում է երկակիությունից, քանի որ միշտ հանդես է գալիս որպես հնչման և իմաստի օրգանական միասնություն: Բառակապակցություններից (դրանց թվում և կայուն կապակցություններից) բառը տարբերվում է նրանով, որ ունի մեկ հիմնական շեշտ: Նախդրավոր-հոլովական կապակցություններից բառը տարբերվում է անթափանցելիությամբ, այսինքն՝ հնարավոր չէ բառի մեջ մտցնել մեկ ուրիշ բառ: Բառը ձևույթից տարբերվում է բառա-քերականական պատկանելիությամբ, տարբեր կապերի մեջ է մտնում այլ բառերի հետ և ներկայացնում է որոշ խոսքի մաս:

Բառի այս տարբերությունները լեզվական մյուս միավորներից, որը նշում է Շանսկին, հիմնականում ընդունելի են: Բայց, իհարկե, հնարավոր չէ այն բոլոր հատկանիշները դնել բառի սահմանման հիմքում և որոշել նրա սպեցիֆիկան որպես լեզվական միավորի: Պետք է գտնել բառի բնորոշում այնպիսի հատկանիշներով, որով նա միաժամանակ տարբերվի թե՛ ձևույթից և թե՛ բառակապակցությունից: Այս հանգամանքները ևս դժվարացնում են բառի սպահիշ բնորոշումը:

Հայ լեզվաբանության մեջ բառը որպես լեզվական միավոր բազմակողմանի չի ուսումնասիրված: Է. Բ. Աղայանն իր «Լեզվաբանության ներածության»⁷ մեջ տալիս է բառի հետևյալ սահմանում. բառ է «այն հնչույթը կամ հնչույթախումբը, որ ունի բառային իմաստ և անկախ, ինքնուրույն գոյություն ու գործածություն»: Բայց այս սահմանումը, ինչպես նշում է հեղինակը, պետք է ընդունել վերապահությամբ, քանի որ այն չի ընդգրկում այն բառերը, որոնք դուրկ են նյութական իմաստից: Բացի դրանից այս սահմանման մեջ բառը բնորոշված է բառային իմաստով, այսինքն, մեկ անհայտը բացահայտվում է մեկ ուրիշ անհայտով: Ի. Սևակը սահմանում է բառը, թվելով նրա առանձնահատկությունները՝

1. բառը հիմնականում կոնկրետացած, մասնավորված իմաստ է արտահայտում.

2. ավարտված, վերջավորված, ինքնամիտ միավոր է, թե ըստ բովանդակության, թե ըստ ձևի և այդ պատճառով ունի ինքնուրույն գործածություն.

3. ունի մեկ բառական շեշտ:

Այս սահմանումը ևս սպառիչ ձևով չի արտահայտում բառի սպեցիֆիկան:

Նշենք, որ բառի մինչև այժմ տրված ոչ մի սահմանում չի կարելի համարել բացարձակ ճշգրիտ և ընդունելի: Բառի բնորոշումը կարիք է զգում խոր ու բազմակողմանի հետազոտության:

Բառի ամբողջական ուսումնասիրության համար անհրաժեշտ է քննել նաև նրա սեմանտիկական կառուցվածքը:

Վերը մենք ասացինք, որ բառի և հասկացության միջև կա էական կապ ու հարաբերություն, թեև դրանք տարբեր կարգի երևույթներ են: Պետք է նկատի ունենալ, որ բառի իմաստը չի սպառվում հասկացությունով: Նույն հասկացությունը տարբեր լեզուներում արտահայտվում է կամ առանձին բառով, կամ բառակապակցությունով: Օրինակ՝

железная дорога — երկաթուղի, книжный шкаф — գրապահարան, կամ близорукный — կարճատես, անհեռատես:

7 Է. Բ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1963, էջ 239.

8 Ի. Սևակ, Հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 207.

Այս վերջին հասկացությունը ուսուցանում կատարված է *рука բառի հետ*, հայերենում՝ տեսնել բառի հետ:

Եվ настольный словарь — առձեռն բառարան:

Այս ձևային դրսևորումների տարբերությունները կախված են նրանից, թե որքանով է բառի միջոցով տվյալ հասկացությունը տարբերակված լեզվի մեջ:

Այս հանգամանքը պետք է նկատի ունենալ բառարանագրության մեջ, մանավանդ երկլեզվյան բառարան կազմելիս և հաշվի առնել լեզուների ձևային և իմաստային դրսևորումների տարբերությունները:

Մեր այս համառոտ հոդվածի եզրակացություններն են՝

1. Բառը լեզվի հիմնական միավորներից մեկն է, այն չի կարելի ոչ դուրս գցել լեզվական միավորների շարքից, ոչ էլ համարել միակ միավորը: Այն պետք է լեզվաբանության ուսումնասիրության առարկա դառնա իր թե ձևային, թե իմաստային կողմերով:

2. Բառը որպես լեզվական միավոր ունի հարաբերական ինքնուրույնություն: Կոնտեքստը ազդում է բառի և մասնավորապես, նրա իմաստային կողմի վրա, բայց դա բառը չի զրկում ինքնուրույնությունից: Կոնտեքստը բառին չի կարող նրա բուն իմաստից դուրս պատահական իմաստներ թելադրել, բառի ամեն մի կոնտեքստային իմաստի մեջ այսպես թե այնպես դեր է կատարում նրա բուն իմաստը:

3. Բառը իր բոլոր կողմերով հարաբերակից է, մի կողմից՝ ձևային (շատ ձևայիններ միայնակ բառ են կազմում), մյուս կողմից՝ բառակապակցությանը, բայց չի նույնացվում ոչ մեկի, ոչ մյուսի հետ: Բառի սահմանադատման հարցը կարիք է զգում ավելի բազմակողմանի քննության: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ այս հարցում պետք է հաշվի առնել բառի թե՛ հնչյունական և թե՛ իմաստային հատկանիշները:

И. СРЕЛЬЦОВА

ТЕОРИЯ СЛОВА В СОВРЕМЕННОЙ ЛИНГВИСТИКЕ

Р е з ю м е

Слово как лингвистическая единица играет важную роль и занимает особое место в системе языка. Существуют различные теории слова, основанные на различном подходе языковеда к изучению языка вообще и слова, в частности. Структуральная лингвистика, рассматривая язык как систему знаков, символов, исследует лишь внешнюю сторону языка, отбрасывая его внутреннюю, семантическую сторону. Вследствие этого, слово как единица, выражающая смысл, или вообще не признается единицей языка (глоссематика) или же отходит на второй план и изучается лишь его формальная сторона (лесскриптивная лингвистика).

Лингвисты, исследующие язык с точки зрения его коммуникативной функции, на первый план выдвигают семантическую сторону языка и, таким образом, слово включают в ряд основных единиц языка. Некоторые же языковеды в качестве основной единицы языка признают только

слово (Смирницкий, Ахманова, Шанский). Мы находим, что в этих двух подходах к изучению языка имеются крайности, которые необходимо преодолеть. Слово — одна из основных единиц языка. И объектом исследования языковедов должны стать как формальная сторона слова, так и его смысловая сторона. В данной статье критикуются те теории слова, в основе которых лежит отрицание самостоятельности слова. Слово имеет относительную самостоятельность. Доказывая это на примере взаимоотношения слова и контекста, мы приходим к выводу, что контекст определенным образом влияет на значение слова. Однако это влияние не абсолютно. Контекстуальное значение слова так или иначе связано с основным значением слова и обусловлено им.

В статье затронут вопрос о границах слова. Определение границ слова — одна из важных проблем современной лексикологии и лексикографии. Мы считаем необходимым при определении границ слова учитывать как фонетические, так и смысловые признаки слова.